

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Նոր տարվա առթիվ այցելություն տվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆ. Սարգսյանին հունվարի 14-ին, առավոտյան ժամը 10-ին:

Վեհափառ Հայրապետի և մեծահարգ նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ ամանորյա փոխադարձ բարեմաղթություններով:

Ընդունելությանը ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ տիար Հրաչիկ Վարդանյանը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիար Անդրանիկ Հասրաթյանը և տիար Ռաֆիկ Զարգարյանը: